

Մրցույթի հայտարարություն

«Լեհվազի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ»-ի
տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝
պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության
(նշանակման) կարգի համաձայն՝ «Լեհվազի միջնակարգ դպրոց», «Վարդանիձորի միջնակարգ
դպրոց» և «Լիճքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման միացյալ խորհուրդը
հայտարարում է մրցույթ՝ «Լեհվազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր
տեղը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու
պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի
բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել
մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը
խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո
1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի
պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Լեհվազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի
մայիսի 26-ից մինչև հունիսի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 15:00-ը, բացի
հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և
հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. հունիսի 29-ին՝ ժամը 13:00-ին, «Լեհվազի միջնակարգ
դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Լեհվազ, 1-ին փողոց, շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել 094 09-04-91, 093 02-01-92

հեռախոսահամարներով, էլ. հասցե՝ lehvaz@schools.am: